

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ,
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Հեռ.՝ (374 10) 510910, 8686,

Ֆաքս՝ (374 10) 538904

E-mail: bank@acb.am

Տարեկան հաշվետվություն 2016թ., 28 ապրիլի 2017թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)
արժեթղթերի քանակը՝ 1,852,533
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 2,500 ՀՀ դրամ

«Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է բանկը»:

ստորագրող անձինք՝

Արտակ Առաքելյան	Գործադիր տնօրենի տեղակալ-գանձապետ	28.04.2017թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ամսաթիվ)
Օնիկ Զիչյան	Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ	28.04.2017թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ամսաթիվ)
Ռուբեն Բադալյան	Գործառնական գծով տնօրենի տեղակալ	28.04.2017թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ամսաթիվ)
Աստղիկ Մանրիկյան	Միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ	28.04.2017թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ամսաթիվ)
Արփինե Փիլոսյան	Տեխնոլոգիաների և անվտանգության գծով տնօրենի տեղակալ	28.04.2017թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ամսաթիվ)
Դավիթ Ազատյան	Գլխավոր հաշվապահ	28.04.2017թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ամսաթիվ)
Հայկ Ավետիսյան	Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ	28.04.2017թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ամսաթիվ)
Վրեժ Զհանգիրյան	Իրավաբանական վարչության պետ	28.04.2017թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ամսաթիվ)
Նարինե Կարապետյան	Վարկավորման վարչության պետ	28.04.2017թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ամսաթիվ)
Արամայիս Գալստյան	Գործադիր տնօրեն	28.04.2017թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ամսաթիվ)

Կ.Տ.
ARMENIABANK

ԱՆՎԱՌ ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ՀԱՀՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՍՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՀՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին և Տնօրենների
խորհրդին՝

Կարծիք

Կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են
ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2016 թ. դեկտեմբերի 31-ի
դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ
համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում
փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ
հաշվետվությունները, ինչպես նաև դրանց առնչվող ծանոթագրությունները,
պատրաստվել են «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության («Բանկ»)՝
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական
հաշվետվությունների հիման վրա:

Մեր կարծիքով, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական
առումներով համապատասխանում են աուդիտ անցած ֆինանսական
հաշվետվություններին՝ ըստ ծանոթագրություն 3-ում նկարագրված հիմունքների:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, չեն ներառում բոլոր բացահայտումները,
որոնք պահանջվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային
ստանդարտներով (ՖՀՄՍ): Հետևաբար՝ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների
ընթերցումը չի փոխարինում «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության
աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը: Այդ ֆինանսական
հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն
արտացոլում այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր
արտահայտած կարծիքի ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերի
ազդեցությունները:

Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր հաշվետվությունը

Մենք չենք օգտագործվել կարծիք ենք արտահայտել այդ ֆինանսական
հաշվետվությունների վերաբերյալ 2017 թ. ապրիլի 28-ին: Մեր հաշվետվությունը
ներառում է նաև՝

- Աուդիտի առանցքային հարցերի վերաբերյալ տեղեկացում:
Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք ըստ մեր
մասնագիտական դատողության առավել նշանակալի էին ընթացիկ
ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների ընթացքում:

**Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ ֆինանսական
հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ծանոթագրություն 3-ում նկարագրված
հիմունքով աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ամփոփ տարբերակը
կազմելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել առ այն, թե արդյոք ամփոփ
ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում
են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին՝ հիմնվելով Աուդիտի
միջազգային ստանդարտ (ԱՄՍ) 810 «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների
վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող
առաջադրանքներ» ստանդարտի համաձայն իրականացված մեր ընթացակարգերի
վրա:


Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն
Աուդիտի գործընկեր

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
28 ապրիլի, 2017 թ.



«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն
2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ՝		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	32,059,829	27,550,590
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով	1,676	-
Հափվող ֆինանսական ակտիվներ		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	8,253,897	7,128,134
Հակադարձ հետգնման պայմանագրեր	4,552,427	832,166
Հաճախորդների տրված վարկեր	75,047,659	59,175,240
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		
- Բանկի կողմից պահվող	2,879,255	338,213
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	13,169,605	8,527,788
Շահութահարկի գծով կանխավճար	38,826	97,099
Հետաձգված հարկային ակտիվներ	-	105,444
Հիմնական միջոցներ	8,437,062	4,133,786
Ոչ նյութական ակտիվներ	231,263	83,116
Այլ ակտիվներ	1,510,859	423,612
Ընդամենը ակտիվներ	146,182,358	108,395,188
Պարտավորություններ և սեփական կապիտալ		
Պարտավորություններ՝		
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով	-	693
Հափվող ֆինանսական պարտավորություններ		
Հետգնման պայմանագրեր	13,224,755	9,104,678
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	2,989,000	2,764,173
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,006,062	11,185,602
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	14,087,891	2,997,550
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	66,795,292	61,973,987
Հետաձգված հարկային պարտավորություններ	1,025,222	-
Ստորագրած փոխառություն	5,400,172	4,425,604
Այլ պարտավորություններ	1,084,546	942,825
Ընդամենը պարտավորություններ	118,612,940	93,395,112
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	4,631,333	2,333,338
Եմխոն եկամուտ	9,110,850	-
Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճարներ	-	4,001,688
Վերադառնալիքի ավելցուկ	3,264,437	-
Գլխավոր պահուստ	6,000,000	6,000,000
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների պահուստ	1,251,977	(96,295)
Չբաշխված շահույթ	3,310,821	2,761,345
Ընդամենը սեփական կապիտալ	27,569,418	15,000,076
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	146,182,358	108,395,188

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները Բանկի ղեկավարության կողմից հաստատվել են 2017 թվականի ապրիլի 28-ին:

Ստորագրվել են ղեկավարության անունից՝

Արամայիշ Գալստյան
Գործադիր տնօրեն

Դավիթ Ազատյան
Գլխավոր հաշվապահ



Տես ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	2016 թ.	2015 թ.
Տոկոսային եկամուտ	11,359,949	9,858,009
Տոկոսային ծախս	(5,856,079)	(5,317,086)
Չուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստները	5,503,870	4,540,923
Տոկոսակիր ակտիվների գծով (արժեզրկումից կորուստներ)/արժեզրկման հակադարձումներ	(564,262)	(358,600)
Չուտ տոկոսային եկամուտ	4,939,608	4,182,323
Չուտ (վնաս)/օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից	12,582	(242,318)
Չուտ արտարժույթային եկամուտ	601,945	885,591
Վճարներ և կոմիսիոն եկամուտներ	1,479,985	1,460,908
Վճարներ և կոմիսիոն ծախսեր	(365,689)	(386,072)
Չուտ օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով	330,885	6,347
Այլ եկամուտ	540,513	397,996
Չուտ ոչ տոկոսային եկամուտ	2,600,221	2,122,452
Գործառնական եկամուտ	7,539,829	6,304,775
Անձնակազմի գծով ծախսեր	(3,511,314)	(3,338,583)
Հիմնական միջոցների մաշվածություն	(484,897)	(371,992)
Ոչ նյութական միջոցների ամորտիզացիա	(20,694)	(15,636)
Այլ ծախսեր	(2,750,562)	(1,979,338)
Արժեզրկումից հակադարձումներ այլ ակտիվների գծով	3,550	4,622
Գործառնական ծախսեր	(6,763,917)	(5,700,927)
Անոցիացված կազմակերպության օգուտի բաժին	-	9,694
Շահույթը նախքան շահութահարկով հարկումը	775,912	613,542
Շահութահարկի գծով ծախս	(185,541)	(164,276)
Տարվա շահույթ	590,371	449,266
Այլ համապարփակ եկամուտ		
Շահույթում կամ վնասում վերադասակարգման ենթակա հոդվածներ		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերազնահատումից զուտ օգուտ/(վնաս) տարվա համար	1,895,215	(428,066)
Հիմնական միջոցների վերազնահատում	4,137,161	-
Տարվա ընթացքում իրացված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերադասակարգումից ճշգրտում	(209,881)	(18,189)
Այլ համապարփակ եկամտի տարրերին վերաբերող շահութահարկ	(1,164,494)	89,251
Անոցիացված կազմակերպության՝ այլ համապարփակ եկամուտի բաժինը	-	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերազնահատումից զուտ վնաս տարվա համար, առանց շահութահարկի	-	(1,555)
Տարվա այլ համապարփակ եկամուտ, շահութահարկով հարկումից հետո	4,658,001	(358,559)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	5,248,372	90,707
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	0.32	0.48
Բազային	0.32	0.47
Նստացված	0.32	0.47

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները Բանկի ղեկավարության կողմից հաստատվել են 2017 թվականի ապրիլի 28-ին:

Ստորագրվել են ղեկավարության անունից՝

Արամայիս Զալադյան
Գործադիր տնօրեն

Գալինա Ազատյան
Ղեկավար հաշվապահ

Տես ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն 2016 թ. դեկտեմբերի 31-ին ամարտված տարվա համար

(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	2016 թ.	2015 թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Տարվա շահույթ	590,371	449,266
Ճշգրտումներ՝		
Շահութահարկի գծով ծախս	185,541	164,276
Տոկոսակիր ակտիվների՝ արժեզրկումից վնաս	564,262	353,978
Մաշվածություն և ամորտիզացիա	505,591	387,628
Հիմնական միջոցների օտարումից օգուտ/(վնաս)	(82,573)	4,625
Եկամուտ դրամաշնորհներից	(507)	(507)
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ	(659,504)	(117,403)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ	(330,885)	(6,347)
Ասոցիացված կազմակերպության բաժնեմաս	-	(9,694)
Այլ եկամուտ	(2,369)	(446)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ՝ նախքան գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխությունները	769,927	1,225,376
Գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություններ		
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում.		
Պահանջներ ֆինանսական կազմակերպություններից	(1,125,763)	(2,107,157)
Հաշվադարձ հետգնման պայմանագրեր	(3,720,261)	423,621
Հաճախորդներին տրված վարկեր	(16,416,511)	(7,001,287)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	54,263
Այլ ակտիվներ	(1,034,484)	92,463
Գործառնական պարտավորությունների (աճ)/նվազում.		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,820,460	1,648,099
Հետգնման պայմանագրեր	4,120,077	1,888,779
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	4,821,305	4,508,413
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	-	(18,966)
Այլ պարտավորություններ	141,721	70,265
Գործառնական գործունեությունից առաջացած/(գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկով հարկումը	(9,623,529)	783,879
Վճարված շահութահարկ	(161,097)	(349,365)
Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(9,784,626)	434,514
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Միացումից ստացված դրամական միջոցներ	3,186,727	-
Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների ձեռքբերում	(4,403,264)	(3,811,200)
Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների իրացումից մուտքեր	1,717,360	877,243
Հիմնական միջոցների ձեռքբերում	(1,124,354)	(535,507)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	1,046,797	66,137
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(52,005)	(3,731)
Ներդրումային գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	371,261	(3,407,058)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից վարկերի ստացում	224,827	343,652
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերից մուտքեր	15,164,652	1,451,945
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի մարում	(4,074,311)	(1,549,365)
Նտորադաս փոխառությունից մուտքեր	974,568	4,386,429
Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճարներ	-	4,001,688
Թողարկված բաժնետոմս	2,112,925	-
Վճարված շահաբաժիններ	(423,057)	(147,063)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	13,979,604	8,487,286
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա	(57,000)	(318,607)
	2016 թ.	2015 թ.
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	4,509,239	5,196,135
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեկան դրությամբ	27,550,590	22,354,455
Տես ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները		9

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեվերջի դրությամբ
 Լրացուցիչ տեղեկություններ՝
 Ստացված տոկոսներ
 Վճարված տոկոսներ

	<u>32,059,829</u>	<u>27,550,590</u>
	12,521,035	9,345,327
	(5,998,448)	(5,270,327)

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները Բանկի ղեկավարության կողմից հաստատվել են 2017 թվականի ապրիլի 28-ին:

Ստորագրվել են ղեկավարության անունից՝


 Երամայիւ Բաշադյան
 Գործադիր տնօրէն


 Դավիթ Ազատյան
 Գլխավոր հաշվապահ



«Հայէկոմսթանկ» բազ բաժնետիրական ընկերություն

Անկախ կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(*Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ*)

	Բաժնե- տիրական կապի- տալ	Բաժնե- տոմերի թողարկմ ան համար ստաց- ված կանխա- վճարներ	Էմիսիոն եկամուտ	Ցվառվոր պահուստ	Հիմնա- կան միջոց- ների վերադն. պահուստ	Վաճառքի համար մատչելի ֆինանս. ակտիվ- ների պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդ 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ	2,333,338	-	-	5,405,133	-	262,264	3,070,280	11,071,015
Տարվա շահույթ	-	-	-	-	-	-	449,266	449,266
Տարվա այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	-	-	-	-
Տարվա այլ համապարփակ եկամուտ՝ շահութահարկից հետո	-	-	-	-	-	(357,004)	-	(357,004)
Անցիացված կազմակերպության այլ համապարփակ եկամուտի մասնաբաժին՝	-	-	-	-	-	-	-	-
Շահութահարկից հետո	-	-	-	-	-	(1,555)	-	(1,555)
Ընդամենը տարվա այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	-	(358,559)	-	(358,559)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	-	-	-	-	(358,559)	449,266	90,707
Հայտարարված Շահութաբաժիններ	-	-	-	-	-	-	(163,334)	(163,334)
Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճարներ	-	4,001,688	-	-	-	-	-	4,001,688
Գլխավոր պահուստի ավելացում	-	-	-	594,867	-	-	(594,867)	-
Մնացորդ 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,333,338	4,001,688	-	6,000,000	-	(96,295)	2,761,345	15,000,076
Տարվա շահույթ	-	-	-	-	-	-	590,371	590,371


Տես ամփոփ ֆինանսական հաշվետվություններն կից ծանոթագրությունները

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Բաժնե- տիրական կապի- տալ	Բաժնե- տոմսերի թողարկմ ան համար առաց- կան կանխա- վճարներ	Էմիսիոն եկամուտ	Ցայտմիտ պահուստ	Հիմա- կան միջոց- ների վերազն. պահուստ	Վաճառքի համար մատչելի ֆինանս. ակտիվ- ների պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Տարվա այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	(45,292)	-	45,292	-
Վերազնադրված պահուստի մաշվածության փոխանցում, առանց հարկի, 11,313-ի չափով	-	-	-	-	-	-	-	-
Տարվա այլ համապարփակ եկամուտ՝ շահութահարկով հարկումից հետո	-	-	-	-	3,309,729	1,348,272	-	4,658,001
Ընդամենը տարվա այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	3,264,437	1,348,272	45,292	4,658,001
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ Հայտարարված շահութաժիններ	-	-	-	-	3,264,437	1,348,272	635,663	5,248,372
Սովորական բաժնետոմսերի թողարկում	1,195,030	(4,001,688)	4,919,583	-	-	-	-	2,112,925
Չեղբերում՝ միացման միջոցով	1,102,965	-	4,191,267	-	-	-	-	5,651,068
Մնացորդը 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,631,333	-	9,110,850	6,000,000	3,264,437	1,251,977	3,310,821	27,569,418

Սույն ամփոփ հիմնադրաման հաշվետվությունները Բանկի ղեկավարության կողմից հաստատվել են 2017 թվականի ապրիլի 28-ին:

Ստորագրել են ղեկավարության անունից՝


Դավիթ Ագասյան
 Գլխավոր հաշվապահ



Կրտսեղին Գրիգորյան
 Գործադիր տնօրեն

Տես սովորական հաշվետվություններին կից ծանուցադրությունները

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվետու տարվա գործունեությունը գնահատելով՝ փաստենք, որ, բանկը որդեգրած ռազմավարության հետևողական իրականացման, կորպորատիվ կառավարման, ներքին հսկողության համակարգի բարձր մակարդակի և ռիսկերի կառավարման օպտիմալ ռազմավարության ընտրության շնորհիվ կարողացավ դիմակայել առկա մրցակցությանը և զարգացման մարտահրավերներին՝ ապահովելով գործունեության հիմնական ցուցանիշների զգալի աճ և կարևոր որակական տեղաշարժեր:

Կարևորվում է բանկի՝ որպես ունիվերսալ կառույցի զարգացման ռազմավարության շարունակականությունը, որը կապահպանվի նաև ապագայում:

Բանկի՝ որպես կայացած և հեռանկարային ֆինանսական կառույցի, գնահատականը պետք է համարել նաև «Moody's Investors Service» ընկերության կողմից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին ռեյտինգների շնորհման, ինչպես նաև ISO/IEC 27001 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագրի ստացման փաստը, որը մեծ հեռանկարներ է բացում բանկի միջազգային ճանաչման, միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության էլ ավելի խորացման և բանկի հետագա զարգացման տեսանկյունից:

Հաշվետու տարում Բանկի կանոնադրական կապիտալը համալրվեց 2,297,995 հազ ՀՀ դրամով, «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ն միացավ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին, որի արդյունքում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կապիտալն ավելացավ 5,294,232 հազ. դրամով, իսկ մասնաճյուղային ցանցը՝ 6 մասնաճյուղով, գործարկվեց «ԵՐԵՎԱՆ» մասնաճյուղը, ինչպես նաև վերաբացվեց նոր վերանորոգված և վերակառուցված «ՌՈՍԻԱ» մասնաճյուղը: Բանկը ներդրեց «SHOPPING», «Նվազող Հեշտ» և «Ակնթարթ» վարկային պրոդուկտները, բանկոմատի միջոցով Պին կոդի փոփոխման ծառայությունը, քարտային գործառնությունների անվտանգության բարձրացման նպատակով՝ «Verified by Visa®» (VbV) և «MasterCard® SecureCode™» համակարգերը, քարտից օգտվելու հարմարավետության և անվտանգության համար՝ բջջային կապի «USSD» տեղեկատվական և կառավարման համակարգը, որի միջոցով կարելի է կատարել քարտի մնացորդի հարցում, վերջին մի քանի գործառնությունների մասին տեղեկատվության հարցում, կորցրած քարտի բլոկավորում, ինչպես նաև միացավ «MoneyTun» և «Faster» վճարահաշվարկային համակարգերին:

Հաշվետու տարին արդյունավետ էր նաև միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համագործակցության առումով. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, շվեյցարական «SYMBIOTICS» SA և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում գտնվող «MICRO, SMALL & MEDIUM ENTERPRISES BONDS» S.A. ֆինանսական հաստատությունների միջև կնքվեց 10.0 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցներն ուղղվելու են միկրո, փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը: Շվեյցարական «BLUEORCHARD» SA հետ համագործակցության շնորհիվ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում գտնվող «BLUEORCHARD MICROFINANCE FUND» LLC ներդրումային ընկերության միջև կնքվեց 5.0 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցներն ուղղվելու են միկրո և փոքր բիզնեսի վարկավորմանը: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և բելգիական «INCOFIN CVBA» ներդրումային ընկերության միջև կնքվեց 6.0 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցներն ուղղվելու են միկրո և փոքր բիզնեսի վարկավորմանը: Շվեյցարական

«SYMBIOTICS» SA հետ համագործակցության շնորհիվ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում գտնվող «GLOBAL IMPACT INVESTMENTS» SÀRL ներդրումային ընկերության միջև կնքվեց 5.0 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցներն ուղղվելու են միկրո բիզնեսի վարկավորմանը: Շվեյցարական «SYMBIOTICS» SA հետ համագործակցության շնորհիվ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում գտնվող «FINETHIC» S.C.A. ներդրումային ընկերության միջև կնքվեց 1.0 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցներն ուղղվելու են միկրո և փոքր բիզնեսի վարկավորմանը:

2016 թ. Ասիական Զարգացման Բանկը Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհեց «Հայաստանում Առաջատար Գործընկեր Բանկ» մրցանակը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի արդյունավետ զարգացող օղակներից մեկը, որը վերջին տասնութ տարիներին գործել է շահույթով: Նշվածը հատկանշական է, հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման ընդհանուր իրավիճակը և բանկային համակարգում դրսևորված միտումները:

Հանդիսանալով ունիվերսալ բանկ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործունեություն է ծավալում բանկային ծառայությունների մատուցման բոլոր ոլորտներում: Բանկը իր կայուն դիրքերն ունի թե արտարժույթային, թե արժեթղթերի, թե միջբանկային շուկաներում: Որպես ունիվերսալ կառույց, բանկը ակտիվ գործունեություն է ծավալում թե վարկավորման, թե ծառայությունների մատուցման, թե փոխանցումների նոր ձևերի, թե պլաստիկ քարտերի սպասարկման ոլորտներում:

Բանկի առջև դրված հեռանկարային և կարճաժամկետ (ընթացիկ) նպատակների իրականացմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը պայմանավորված է ռիսկերի կառավարման օպտիմալ համակարգի առկայությամբ, որն ուղղված է ռիսկերի ընդունելի մակարդակի և ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցության պայմաններում Բանկի գործունեության շարունակականության ապահովմանը:

Բանկում ռիսկերի կառավարման մշակույթը ենթարկվում է շարունակական կատարելագործման՝ ելնելով կայուն, հուսալի, արդյունավետ և ապահով գործունեության ծավալման նպատակներից:

Բանկի ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության հիմքում ընկած է վերջինիս զարգացման և շարունակական կատարելագործման աշխատանքներում միջազգային պրակտիկայում ընդունված չափորոշիչներով, այդ թվում՝ Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի համաձայնագրերի, ISO/IEC 27001 (Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ) միջազգային ստանդարտի և այլ պահանջներով առաջնորդվելու հանգամանքը:

Ռիսկերի կառավարումը էական նշանակություն ունի և՛ առանձին բանկերի, և՛ բանկային համակարգի կայուն, հուսալի, արդյունավետ և ապահով զարգացման գործընթացում, ուստի գնալով ավելի է կարևորվում արդյունավետ ռիսկերի կառավարման համակարգի ներդրումը առանձին բանկերում և բանկային համակարգում: Կառավարման իրավասու մարմինների կողմից սահմանվում են առաջադրված ընթացիկ և ռազմավարական նպատակների իրականացման տեսանկյունից նպատակահարմար՝ ռիսկերի ընդունելի մակարդակները, որոնք Բանկի ղեկավարության կարծիքով կապահովեն Բանկի կայուն զարգացումը:

Ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝ Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի նույնականացում, գնահատում, հսկողություն, հաղորդակցում-հաշվետվություն և գնահատված ռիսկերին արձագանքում: Ընդ որում ռիսկերին արձագանքման փուլն իրականացվում է ռիսկից խուսափման, ռիսկի նվազեցման, ռիսկի ընդունման կամ ռիսկի փոխանցման տարբերակներով: Տնտեսամաթեմատիկական մոդելավորման գործիքների կիրառման, գործընթացների կանոնակարգման, վերլուծության, կանխատեսման և ներքին հսկողության համակարգի մշտական կատարելագործման արդյունքում՝ Բանկը հնարավորություն է ստանում ռիսկերի կառավարման համակարգի միջոցով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցությունը՝ Բանկի զարգացման կշռադատված ռազմավարության պայմաններում բացառելով կամ նվազագույնի հասցնելով Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստները և ապահովելով գործող նորմատիվային դաշտի պահանջները:

Ռիսկերի կառավարման հիմնական սկզբունքները, առանձին ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոտեցումները, մեթոդաբանությունները և մոդելները սահմանված են բանկի ներքին իրավական ակտերում՝ զուգակցելով դրանք բանկի համախառն ռիսկի գնահատման և դրա օպտիմալ կառավարման միջոցառումների սահմանմամբ: Բանկի ռիսկերի կառավարման համակարգը ներքին և արտաքին միջավայրերում տեղի ունեցող փոփոխություններին, բանկի ռազմավարական խնդիրներին և իրականացվող գործառնությունների ծավալային և որակական բնութագրերին համապատասխանեցնելու նպատակով ռիսկերի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերը պարբերաբար վերանայվում են:

Բանկի համախառն ռիսկը կառավարվում է համապատասխան տնտեսամաթեմատիկական մոդելի հիման վրա՝ արտարժույթային, վարկային, իրացվելիության և տոկոսադրույքի փոփոխման ռիսկերի և դրանց գումարային՝ համախառն ռիսկի էական չափերի (մակարդակների) սահմանման և մոնիտորինգի միջոցով: Ռիսկերի էական մակարդակները կարող են վերանայվել՝ ելնելով Բանկի ռազմավարական նպատակներից, շուկայում առկա միտումներից և մրցակցության մակարդակից, ինչպես նաև միջավայրի այլ փոփոխություններից:

Համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման քաղաքականության» պահանջների, հաշվի առնելով Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի և GARP-ի (Generally Accepted Risk Principles) ռիսկերի կառավարման սկզբունքները՝ բանկում մշակվել և ներդրվել են հետևյալ հիմնական ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոդելները.

- վարկային ռիսկ,
- տոկոսադրույքների փոփոխման ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- արտարժույթային ռիսկ,
- գնային ռիսկ,
- գործառնական ռիսկ:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը վարկի, հաշվարկված տոկոսի կամ դրանց մի մասի պայմանագրով սահմանված ժամկետներից ուշացման կամ անվերադարձելիության

հնարավոր վտանգն է՝ պայմանավորված վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացմամբ, գրավի արժեզրկմամբ և նման այլ պատճառներով:

Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքի հնարավոր տարբեր փոփոխությունների ազդեցությունները Բանկի գործունեության ընթացիկ ցուցանիշների վրա վերլուծվում և գնահատվում է սթրես թեստավորման և տարբեր հավանական սցենարների դիտարկման միջոցով: Մշակված սթրես թեստերի տարբեր սցենարների միջոցով իրականացվում է վարկային ռիսկի գնահատում՝ հաշվարկելով որոշակի շուկային իրավիճակների ազդեցությունը բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և համարժեքության նորմատիվների վրա, գնահատվում են նորմատիվների խախտման հնարավորությունը և չափերը, պահուստաֆոնդ փոխանցման ենթակա հավելյալ գումարի չափը: Վերոնշյալ սթրեսային սցենարների վերլուծության շրջանակներում իրականացվում է նաև նորմատիվների խախտման կրիտիկական կետերի հաշվարկ և վերլուծություն, որը տեղեկատվություն է տալիս տվյալ օրվա դրությամբ նորմատիվների խախտման հավանականության՝ որպես վարկային ռիսկի յուրօրինակ գնահատականի վերաբերյալ:

Դասակարգված արտարժույթային վարկերի մնացորդների նշանակալի շեմի սահմանման, ինչպես նաև վարկային պորտֆելում դասակարգված արտարժույթային և դրամային վարկերի մնացորդների և քանակների հարաբերակցությունների սահմանափակման միջոցով իրականացվում է արտարժույթային ռիսկով պայմանավորված վարկային ռիսկի նկատմամբ հսկողություն և անհրաժեշտության դեպքում ձեռնարկվում են վերջինիս զսպմանն ուղղված միջոցառումներ:

Վարկային ռիսկի կառավարման արդյունավետ համակարգի շնորհիվ բանկի վարկային պորտֆելը շարունակում է պահպանել ավանդական բարձր որակը և ցածր ռիսկայնության աստիճանը:

Տոկոսադրույքների փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի փոփոխման (տոկոսադրույքի) ռիսկը բանկի զուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների փոփոխման բացասական ազդեցության հավանականությունն է:

Միջազգային պրակտիկայում լայն տարածում գտած «GAP մոդելի» միջոցով տոկոսադրույքների փոփոխության ռիսկը գնահատվում է տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների դիսբալանսի և ժամկետայնության ճեղքվածքների վերլուծության հիման վրա: «Դյուրացիայի մոդելի» հիման վրա տոկոսադրույքի փոփոխման ռիսկը գնահատվում է ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնության ցուցանիշների կիրառմամբ՝ դիտարկելով դյուրացիան որպես տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ ակտիվների և պարտավորությունների ներկա արժեքների զգայունության գնահատման գործիք:

Իրականացվում է նաև առանձին արժույթներով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքների վերլուծություն՝ զուտ տոկոսային եկամտի վրա դրանց տոկոսադրույքների փոփոխության ազդեցության տեսանկյունից:

Նշված մոդելները հնարավորություն են տալիս ակտիվների և պարտավորությունների դյուրացիաների վերլուծության միջոցով իրականացնել

ակտիվների և պարտավորությունների օպտիմալ կառավարում՝ հեջավորելով տոկոսադրույքի ռիսկը:

Եռամսյակային և տարեկան կտրվածքով իրականացվում է տոկոսադրույքների փոփոխության՝ Բանկի զուտ տոկոսային եկամտի և կապիտալի վրա ազդեցության սցենարային վերլուծություն, ինչպես նաև սթրես թեստավորում, որոնց արդյունքները ներառվում են Բանկի հրապարակվող միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում և այլ հաշվետվություններում:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը հավանականությունն է, որ բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն՝ առանց լրացուցիչ կորուստներ կրելու:

Ժամկետայնության ճեղքվածքների հիմնադրույթի կիրառման հիման վրա Բանկում ներդրված իրացվելիության ցուցանիշների գնահատման և կառավարման մեթոդաբանությունը հնարավորություն է ընձեռում հաշվարկված ակնթարթային, մինչև 90 օր և մինչև 1 տարի կուտակային իրացվելիության ցուցանիշների ժամանակային շարքերի հիման վրա գնահատել ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների ազդեցությունը Բանկի իրացվելիության վրա, որը հիմք է հանդիսանում ակտիվների և պարտավորությունների կառավարման օպտիմալ որոշումների կայացման համար:

Սթրես թեստավորման սցենարային մոդելը հնարավորություն է տալիս գնահատել իրացվելիության նորմատիվների վրա շոկային տարբեր հնարավոր իրավիճակների ազդեցությունը՝ վերլուծելով ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների որոշակի բաժնեմասի պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջման և ցպահանջ պարտավորությունների որոշակի բաժնեմասի ետ պահանջման դեպքում (ինչպես նաև նշված բաժնեմասերի տարբեր հնարավոր համակցությունների դեպքում) նորմատիվների փոփոխությունները և դրանց խախտման հավանականությունը: Նորմատիվների խախտման կրիտիկական կետերի հաշվարկումը հնարավորություն է տալիս ստանալ բանկի իրացվելիության ռիսկի այլընտրանքային գնահատականներ՝ վերլուծելով ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջման և ցպահանջ պարտավորությունների ետ պահանջման ազդեցությունը նորմատիվների վրա և վերջիններիս խախտման հավանականությունները:

Բանկի կողմից ներգրավված ցպահանջ և ժամկետային միջոցների կենտրոնացումների ռիսկի գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը, քվանտիլային վերլուծության հիման վրա, հնարավորություն է տալիս գնահատել ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների կենտրոնացումների մակարդակները: Մշակված մեթոդաբանության շրջանակներում իրականացվում է նաև սթրես թեստերի սցենարային վերլուծություն, որը ներառում է խոշորագույն 10% հաճախորդ ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների արտահոսքի ազդեցությունները նորմատիվների վրա, ինչպես նաև հաճախորդների վերոհիշյալ չորս խմբերից (ժամկետային ավանդ ներդրած ֆիզիկական և իրավաբանական անձինք, ցպահանջ ավանդ ներդրած ֆիզիկական և իրավաբանական անձինք) յուրաքանչյուրի 1%-ի ավանդների

արտահոսքի գումարային ազդեցությունը տնտեսական նորմատիվների վրա: Իրացվելիության կառավարման շրջանակներում դիտարկվում են նաև որոշակի շեմային ծավալից ավելի միջոցներ ներդրած խոշոր իրավաբանական և ֆիզիկական անձ առանձին հաճախորդների, ինչպես նաև դրանց խմբերի միջոցների արտահոսքի սցենարային վերլուծությունները, որի արդյունքում ևս գնահատվում է միջոցների արտահոսքի ազդեցությունը նորմատիվների ընթացիկ մակարդակների վրա:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկը արտարժույթի փոխարժեքների տատանման արդյունքում Բանկի կորուստներ կրելու հավանականությունն է:

Բանկում արտարժութային ռիսկի կառավարումն իրականացվում է կիրառելով միջազգային պրակտիկայում ընդունված VAR մեթոդաբանությունը, ինչպես նաև սթրես թեստերի սցենարային վերլուծության մեթոդները: Սթրես թեստերի սցենարային վերլուծություններում դիտարկվում է արտարժույթի փոխարժեքի կտրուկ տատանման ազդեցությունը նորմատիվների վրա: Դիտարկվում են՝ ՀՀ դրամի արժեվորման և արժեզրկման սթրեսային սցենարներ, ինչպես նաև ըստ առանձին արտարժույթների փոխարժեքների տատանման սցենարային համակցության վատագույն սցենարի տարբերակը, որի դեպքում հնարավոր վնասը կկազմի առավելագույնը:

Արտարժութային ռիսկի կառավարման նպատակով կիրառվող VAR մեթոդաբանության հիմքի վրա մշակված արտարժույթների փոխարժեքների տատանումներից հնարավոր առավելագույն վնասների գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը հնարավորություն է տալիս գնահատել Բանկի բաց դիրքերով պայմանավորված հնարավոր կորուստների ռիսկը: Մոդելի համար մուտքային տվյալներ են հանդիսանում փոխարժեքների վերջին 1 տարվա ժամանակային շարքի վարիացիայի ցուցանիշները և Բանկի արտարժութային ակտիվների և պարտավորությունների ծավալները: Մոդելը հնարավորություն է տալիս գնահատել առանձին արտարժույթների գծով և ընդհանուր արտարժութային ակտիվների և պարտավորությունների փաթեթի գծով առկա ռիսկի (հնարավոր առավելագույն վնասի) չափը որոշակի հուսալիության մակարդակով, որը հիմք է հանդիսանում արտարժույթով ակտիվների և պարտավորությունների կառավարման օպտիմալ որոշումների կայացման համար:

Արտարժույթի փոխարժեքների փոփոխության ազդեցությունը Բանկի շահույթի վրա գնահատվում է նաև եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ սթրես թեստերի սցենարային վերլուծության միջոցով, որի արդյունքները ներառվում են Բանկի հրապարակվող միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

Գնային ռիսկ

Գնային ռիսկը որևէ բորսայում(ներում) ցուցակված, բանկի հաշվեկշռում շուկայական ընթացիկ գներով արտացոլվող կապիտալի գործիքների շուկայական գների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով Բանկի կողմից ֆինանսական կորուստներ կրելու վտանգն է՝ պայմանավորված ինչպես տվյալ կապիտալի գործիքի և դրա թողարկողի, այնպես էլ շուկայում շրջանառվող կապիտալի գործիքների

շուկայական գների ընդհանուր տատանումների հետ կապված գործոններով (տվյալ կապիտալի գործիքի գծով երկար կամ կարճ դիրքի առկայության պայմաններում):

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում.

- ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում,
- հնարավոր կորուստների գնահատում,
- հեջավորման գործիքների կիրառում,
- ֆինանսական գործիքների գծով լիմիտների (ըստ կապիտալի գործիքներով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի, stop-loss) սահմանում,
- կապիտալի գործիքների փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

Գործառնական ռիսկ

Բանկի յուրաքանչյուր բիզնես-գործընթաց պարունակում է որոշակի մակարդակի գործառնական ռիսկ, որը կարող է հանգեցնել ինչպես փոքր, այնպես էլ Բանկի համար էական չափերի հասնող կորուստների: Նշված հանգամանքով է պայմանավորված գործառնական ռիսկի արդյունավետ կառավարման կարևորությունը բանկերի համար: Բանկի ռիսկերի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերով գործառնական ռիսկը սահմանվում է որպես ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ (հնարավորություն)՝ առաջացած կամ պայմանավորված Բանկի անձնակազմի ոչ համարժեք կամ սխալ գործողություններով, բանկային գործընթացների կազմակերպման և կատարման թերություններով, խափանումներով, ինչպես նաև անբարենպաստ արտաքին միջավայրի գործողություններով և իրավիճակներով:

Գործառնական ռիսկի վերահսկողության արդյունավետ համակարգի կիրառումն այդ ռիսկի օպտիմալ կառավարման կարևորագույն գործոններից է, որն ապահովվում է օրական հսկողության իրականացման, պարբերական և թեմատիկ ստուգումների միջոցով գործող կանոնակարգվածության մակարդակի պատշաճության գնահատման, կանոնակարգման կարիք ունեցող գործառույթների վերհանման, հնարավոր ռիսկերի բացահայտման և պատասխանատու մարմիններին դրանց մասին տեղեկացման միջոցով:

Ստորև ներկայացնենք բանկի տարեկան գործունեության արդյունքների և ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը:

Ակտիվների կառուցվածքը, երկու տարվա համեմատականով, ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 1

(հազար դրամ)

ԱԿՏԻՎՆԵՐ	31.12.2015	Տեսակարար կշիռը (%)	31.12.2016	Տեսակարար կշիռը (%)	Աճ/նվազում	
					դրամ	%

1	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,550,590	25.42	32,059,829	21.93	4,509,239	16.37
2	Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,128,134	6.57	8,253,897	5.65	1,125,763	15.79
3	Հակադարձ հետգնման պայմանագրեր	832,166	0.77	4,552,427	3.11	3,720,261	447.06
4	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	0	0.00	1,676	0.01	1,676	
5	Հաճախորդներին տրված վարկեր	59,175,240	54.59	75,047,659	51.34	15,872,419	26.82
6	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ						
	- Բանկի կողմից պահվող	338,213	0.31	2,879,255	1.97	2,541,042	751.31
	- Հետգնման պայմանագրով գրավադրված	8,527,788	7.87	13,169,605	9.00	4,641,817	54.43
7	Հիմնական միջոցներ	4,133,786	3.81	8,437,062	5.77	4,303,276	104.10
8	Ոչ նյութական ակտիվներ	83,116	0.08	231,262	0.16	148,146	178.24
9	Հետաձգված հարկային ակտիվներ	105,444	0.10	0	0.00	-105,444	-100.00
10	Շահութահարկի գծով կանխավճար	97,099	0.09	38,826	0.03	-58,273	-60.01
11	Այլ ակտիվներ	423,612	0.39	1,510,862	1.03	1,087,250	256.66
	Ընդամենը ակտիվներ	108,395,188	100.0	146,182,359	100.0	37,787,171	34.86

Բանկի ակտիվների կառուցվածքը, նախորդ տարվա համեմատ, փոփոխվել է հետևյալ կերպ.

- «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ» հոդվածի տեսակարար կշիռը նվազել է 3.49 տոկոսային կետով,
- «Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ» հոդվածի տեսակարար կշիռը նվազել է 0.93 տոկոսային կետով,
- «Հակադարձ հետգնման պայմանագրեր» հոդվածի տեսակարար կշիռն աճել է 2.34 տոկոսային կետով,
- «Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ» հոդվածի տեսակարար կշիռն աճել է 0.01 տոկոսային կետով,
- «Հաճախորդներին տրված վարկեր» հոդվածի տեսակարար կշիռը նվազել է 3.25 տոկոսային կետով,
- «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» հոդվածի տեսակարար կշիռն աճել է 2.79 տոկոսային կետով,
- «Հիմնական միջոցներ» հոդվածի տեսակարար կշիռն աճել է 1.96 տոկոսային կետով,
- «Ոչ նյութական ակտիվներ» հոդվածի տեսակարար կշիռն աճել է 0.08 տոկոսային կետով,
- «Հետաձգված հարկային ակտիվներ» հոդվածի տեսակարար կշիռը նվազել է 0.1 տոկոսային կետով,

- «Շահութահարկի գծով կանխավճար» հոդվածի տեսակարար կշիռը նվազել է 0.06 տոկոսային կետով,
- «Այլ ակտիվներ» հոդվածի տեսակարար կշիռն աճել է 0.64 տոկոսային կետով:

Աղյուսակի տվյալները վկայում են այն մասին, որ բանկի ակտիվները, նախորդ տարվա համեմատ, աճել են 37,787.2 մլն. դրամով կամ 34.9%-ով, ընդ որում՝

- «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ» հոդվածն աճել է 4,509.2 մլն. դրամով կամ 16.4%-ով՝ կազմելով 32,059.8 մլն. դրամ,
- «Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ» հոդվածն աճել է 1,125.8 մլն. դրամով կամ 15.8%-ով՝ կազմելով 8,253.9 մլն. դրամ,
- «Հակադարձ հետգնման պայմանագրեր» հոդվածն աճել է 3,720.3 մլն. դրամով կամ մոտ 5.5 անգամ՝ կազմելով 4,552.4 մլն. դրամ,
- «Հաճախորդներին տրված վարկեր» հոդվածն աճել է 15,872.4 մլն. դրամով կամ 26.8%-ով՝ կազմելով 75,047.7 մլն. դրամ,
- «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» հոդվածն աճել է 7,182.9 մլն. դրամով կամ 81.0%-ով՝ կազմելով 16,048.9 մլն. դրամ,
- «Հիմնական միջոցներ» հոդվածն աճել է 4,303.3 մլն. դրամով կամ ավելի քան 2.0 անգամ՝ կազմելով 8,437.1 մլն. դրամ,
- «Ոչ նյութական ակտիվներ» հոդվածն աճել է 148.1 մլն. դրամով կամ մոտ 2.8 անգամ՝ կազմելով 231.3 մլն. դրամ,
- «Այլ ակտիվներ» հոդվածը նվազել է 1,087.3 մլն. դրամով կամ ավելի քան 3.5 անգամ՝ կազմելով 1,510.9 մլն. դրամ:

Ի լրումն ակտիվների վերը ներկայացված կառուցվածքի, պետք է նշենք, որ բանկերի ակտիվների իրացվելիությունը հսկվում և կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից համապատասխան նորմատիվների միջոցով:

Հաշվետու տարվա արդյունքներով, բանկը գերազանցել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվների պահանջվող մակարդակները, որը հանդիսանում է հուսալիության, արդյունավետ գործունեության կարևորագույն նախապայմանը՝ ապահովելով իրացվելիության անհրաժեշտ մակարդակ:

Բանկի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվների մեծությունները արտացոլված են ստորև բերվող աղյուսակում.

Աղյուսակ 2

Ցուցանիշ	31.12.15		31.12.16	
	Փաստացի մեծություն	ՀՀ ԿԲ կողմից սահմանված թույլատրելի մեծություն	Փաստացի մեծություն	ՀՀ ԿԲ կողմից սահմանված թույլատրելի մեծություն
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների միջև նվազագույն	31.31%	15.00%	32.31%	15.00%

հարաբերակցություն (ընդհանուր իրացվելիություն)				
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցապահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն (ընթացիկ իրացվելիություն)	85.94%	60.00%	136.87%	60.00%

Աղյուսակ 2-ի տվյալները վկայում են, որ, նախորդ տարվա համեմատ, բանկի ընդհանուր իրացվելիության ցուցանիշը աճել է 1.0, իսկ ընթացիկ իրացվելիության ցուցանիշը՝ 50.93 տոկոսային կետով:

Բանկի պարտավորությունների կառուցվածքը, երկու տարվա համեմատականով, արտացոլված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 3

(հազ. դրամ)

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		31.12.2015	Տեսակարար կշիռը (%)	31.12.2016	Տեսակարար կշիռը (%)	Աճ/նվազում	
						դրամ	%
1	ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	2,764,173	2.96	2,989,000	2.52	224,827	8.13
2	Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	11,185,602	11.98	14,006,062	11.81	2,820,460	25.22
3	Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	2,997,550	3.21	14,087,891	11.88	11,090,341	369.98
4	Հետգնման պայմանագրեր	9,104,678	9.75	13,224,755	11.15	4,120,077	45.25
5	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	693	0.01	0	0.00	-693	-100.00
6	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	61,973,987	66.36	66,795,292	56.31	4,821,305	7.78
7	Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ	0	0.00	1,025,222	0.87	1,025,222	
8	Ստորադաս փոխառություն	4,425,604	4.73	5,400,172	4.55	974,568	22.02
9	Այլ պարտավորություններ	942,825	1.00	1,084,546	0.91	141,721	15.03
Ընդամենը պարտավորություններ		93,395,112	100.0	118,612,941	100.0	25,217,829	27.00

Աղյուսակի տվյալները վկայում են այն մասին, որ նախորդ տարվա համեմատ, բանկի պարտավորություններն աճել են 25,217.8 մլն. դրամով կամ 27.0%-ով, ընդ որում.

- ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկերը աճել են 224.8 մլն. դրամով կամ 8.1%-ով՝ կազմելով 2,289.0 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում նվազել է 0.44 տոկոսային կետով,
- Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններն աճել են 2,820.5 մլն. դրամով կամ 25.2%-ով՝ կազմելով 14,006.1 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում նվազել է 0.17 տոկոսային կետով,
- Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերն ու ավանդներն աճել են 11,090.3 մլն. դրամով կամ մոտ 4.7 անգամ՝ կազմելով 14,087.9 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում՝ 8.67 տոկոսային կետով,
- Հետզնման պայմանագրերն աճել են 4,120.1 մլն. դրամով կամ 45.3%-ով՝ կազմելով 13,224.8 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում՝ 1.4 տոկոսային կետով,
- Հաճախորդների նկատմամբ պարտավորություններն աճել են 4,821.3 մլն. դրամով կամ 7.8%-ով՝ կազմելով 66,795.3 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում նվազել է 10.05 տոկոսային կետով,
- Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններն աճել են 1,025.2 մլն. դրամով, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում կազմել է 0.9%,
- Ստորադաս փոխառությունն աճել է 974.6 մլն. դրամով կամ 22.0%-ով՝ կազմելով 5,400.2 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում նվազել է 0.19 տոկոսային կետով,
- Այլ պարտավորություններն աճել են 141.7 մլն. դրամով կամ 15.0%-ով՝ կազմելով 1,084.5 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում նվազել է 0.09 տոկոսային կետով:

Վերլուծելով ընթացիկ տարվա արդյունքները, նշենք, որ բանկի սեփական կապիտալը, նախորդ տարվա համեմատ, աճել է 12.6 մլրդ դրամով կամ 83.8%-ով՝ հիմնականում կանոնադրական կապիտալի համալրման (արդյունքում էմիսիոն եկամտի ստացում) (նոր բաժնետոմսերի թողարկում, ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի հետ միավորում), ձևավորված շահույթի, ինչպես նաև բանկի հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում:

Բանկի կապիտալի կառուցվածքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 4

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ	31.12.2015	31.12.2016
Բաժնետիրական կապիտալ	15.56%	16.80%
Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճարներ	26.68%	0.00%
Էմիսիոն եկամուտ	0.00%	33.05%
Գլխավոր պահուստ	40.0%	21.76%

Այլ պահուստներ	-0.64%	16.38%
Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	2.99%	2.14%
Նախորդ ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	15.41%	9.87%
Ընդամենը կապիտալ	100.0%	100.0%
Ընդամենը կապիտալ /մլն. դրամ/	15,000.1	27,569.4
Մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը /դրամ/	11,840.8	14,882.0

Աղյուսակի տվյալները վկայում են հաշվետու տարում ընդհանուր կապիտալի կառուցվածքի որոշակի փոփոխության մասին:

Աճել են.

- Կանոնադրական կապիտալի տեսակարար կշիռը՝ 1.24 տոկոսային կետով,
- Էմիսիոն եկամուտի տեսակարար կշիռը՝ 33.05 տոկոսային կետով,
- Այլ պահուստների տեսակարար կշիռը՝ 17.03 տոկոսային կետով:

Նվազել են.

- Նախորդ ժամանակաշրջանի շահույթի տեսակարար կշիռը՝ 5.54 տոկոսային կետով,
- Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի տեսակարար կշիռը՝ 0.85 տոկոսային կետով,
- Գլխավոր պահուստի տեսակարար կշիռը՝ 18.24 տոկոսային կետով,
- Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճարների տեսակարար կշիռը 26.68 տոկոսային կետով:

Բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքը 31.12.16թ. դրությամբ (1,582,533 հատ բաժնետոմս) կազմել է 14,882.0 դրամ՝ աճելով նախորդ տարվա համեմատ 3,041.2 դրամով կամ 25.7 %-ով:

Բանկի շահույթի դինամիկան արտացոլված է ստորև բերված աղյուսակում.

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Աղյուսակ 5 (հազ. դրամ)			
	2015	2016	Աճ/նվազում	
			դրամ	%
Տոկոսային եկամուտ	9,858,009	11,359,949	1,501,940	15.24
Տոկոսային ծախս	5,317,086	5,856,079	538,993	10.14
Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստները	4,540,923	5,503,870	962,947	21.21
Տոկոսակիր ակտիվների գծով (արժեզրկումից կորուստներ)/արժեզրկման հակադարձումներ	(358,600)	(564,262)	205,662	57.35
Զուտ տոկոսային եկամուտ	4,182,323	4,939,608	757,285	18.11
Կոմիսիոն եկամուտներ	1,460,908	1,479,985	19,077	1.31
Կոմիսիոն ծախսեր	386,072	365,689	-20,383	-5.28
Զուտ կոմիսիոն եկամուտներ	1,074,836	1,114,296	39,460	3.67
Զուտ արտարժույթային եկամուտ	885,591	601,945	-283,646	-32.03
Զուտ (վնաս)/օգուտ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից	(242,318)	12,582	254,900	105.19
Զուտ օգուտ վաճառքի համար մատչելի	6,347	330,885	324,538	5113.25

Ֆինանսական ակտիվների գծով				
Այլ եկամուտներ	397,996	540,513	142,517	35.81
Արժեզրկումից հակադարձումներ/(կորուստներ) այլ ակտիվների գծով	4,622	3,550	-1,072	-23.19
Անձնակազմի գծով ծախսեր	3,338,583	3,511,314	172,731	5.17
Հիմնական միջոցների մաշվածություն	371,992	484,897	112,905	30.35
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	15,636	20,694	5,058	32.35
Այլ ծախսեր	1,979,338	2,750,562	771,224	38.96
Ասոցիացված կազմակերպություններում օգուտի/(վնասի) բաժին	9,694	0	-9,694	-100.00
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	613,542	775,912	162,370	26.46
Շահութահարկի գծով ծախս	164,276	185,541	21,265	12.94
Տարվա շահույթ	449,266	590,371	141,105	31.41

Համաձայն աղյուսակի տվյալների, բանկի շահույթը, նախորդ տարվա համեմատ, աճել է 141.1 մլն. դրամով կամ 31.41%-ով՝ կազմելով 590.4 մլն. դրամ, ընդ որում՝

- Տոկոսային եկամուտներն աճել են 1,501.9 մլն. դրամով կամ 15.2%-ով՝ կազմելով 11,359.9 մլն. դրամ, իսկ տոկոսային ծախսերը՝ 539.0 մլն. դրամով կամ 10.1%-ով՝ կազմելով 5,856.1 մլն. դրամ: Տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստներն աճել են 205.7 մլն. դրամով կամ 57.4%-ով՝ կազմելով 564.3 մլն. դրամի կորուստ: Արդյունքում զուտ տոկոսային եկամուտներն աճել են 757.3 մլն. դրամով կամ 18.1%-ով՝ կազմելով 4,939.6 մլն. դրամ:
- Կոմիսիոն եկամուտներն աճել են 19.1 մլն. դրամով կամ 1.3%-ով՝ կազմելով 1,480.0 մլն. դրամ, իսկ կոմիսիոն ծախսերը նվազել են 20.4 մլն. դրամով կամ 5.3%-ով՝ կազմելով 365.7 մլն. դրամ: Արդյունքում ստացված զուտ կոմիսիոն եկամուտներն աճել են 39.5 մլն. դրամով կամ 3.7%-ով՝ կազմելով 1,114.3 մլն. դրամ:
- Զուտ արտարժույթային եկամուտը նվազել է 283.6 մլն. դրամով կամ 32.0%-ով՝ կազմելով 283.6 մլն. դրամ,
- Շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից զուտ օգուտն աճել է 254.9 մլն. դրամով կամ ավելի քան 2.0 անգամ՝ կազմելով 12.6 մլն. դրամ,
- Վաճառքի համար մատչելի ներդրումներից օգուտն աճել է 324.5 մլն. դրամով կամ ավելի քան 51.0 անգամ՝ կազմելով 330.9 մլն. դրամ,
- Այլ եկամուտներն աճել են 142.5 մլն. դրամով կամ 35.8%-ով՝ կազմելով 540.5 մլն. դրամ,
- Այլ ակտիվների գծով արժեզրկումից հակադարձումները նվազել են 1.1 մլն. դրամով կամ 23.2%-ով՝ կազմելով 3.6 մլն. դրամ,
- Անձնակազմի գծով ծախսերն աճել են 172.7 մլն. դրամով կամ 5.2%-ով՝ կազմելով 3,511.3 մլն. դրամ,
- Հիմնական միջոցների մաշվածությունն աճել է 112.9 մլն. դրամով կամ 30.4%-ով՝ կազմելով 484.9 մլն. դրամ,
- Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան աճել է 5.1 մլն. դրամով կամ 32.4%-ով՝ կազմելով 20.7 մլն. դրամ,

- Այլ ծախսերն աճել են 771.2 մլն. դրամով կամ 39.0%-ով՝ կազմելով 2,750.6 մլն. դրամ,
- Ասոցիացված ընկերությունների գործունեությունից օգուտը նվազել է 9.7 մլն. դրամով կամ 100.0%-ով՝ կազմելով 0 դրամ,
- Շահույթը մինչև հարկումն աճել է 162.4 մլն. դրամով կամ 26.5%-ով՝ կազմելով 775.9 մլն. դրամ,
- Շահութահարկի գծով ծախսն աճել է 21.3 մլն. դրամով կամ 12.9%-ով՝ կազմելով 185.5 մլն. դրամ:

Բանկը ծառայություններ է մատուցում օրենսդրությամբ սահմանված կարգով, հաշվի առնելով տարիքային դասակարգումը, անկախ սոցիալական պատկանելիությունից և իրավական կարգավիճակից: Բանկի հաճախորդների կառուցվածքը բնորոշում են հետևյալ տվյալները:

Բանկի հաճախորդների թվաքանակի փոփոխությունը հաշվետու տարում արտացոլված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 6

	31.12.2015	31.12.2016	Աճ/նվազում	
			քանակ	%
Իրավաբանական անձինք	5,204	5,882	678	13.03%
Ֆիզիկական անձինք	128,420	152,413	23,993	18.68%
Ընդամենը	133,624	158,295	24,671	18.46%

Աղյուսակի տվյալները վկայում են բանկի հաճախորդների կառուցվածքում տեղ գտած հետևյալ փոփոխությունների մասին.

ընդամենը հաճախորդներն ավելացել են 24,671-ով կամ 18.46%-ով, այդ թվում.

- իրավաբանական անձ հաճախորդների քանակն աճել է 678-ով կամ 13.03%-ով՝ կազմելով ընդամենը հաճախորդների 3.7%-ը,
- ֆիզիկական անձ հաճախորդների քանակն աճել է 23,993-ով կամ 18.68%-ով, կազմելով ընդամենը հաճախորդների 96.3%-ը:

Հաշվետու տարում բանկը շարունակել է իր որդեգրած քաղաքականությունը հաճախորդների բնագավառում՝ պահպանելով փոխշահավետության սկզբունքը՝ հաճախորդներին առաջարկել բանկային ծառայությունների ընդգրկուն փաթեթ, մշտապես նորացնելով և բազմազանելով այն, բարելավելով ծառայությունների մատուցման որակը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համար հիմնական մրցակիցներ են հանդիսանում ՀՀ-ում գործունեություն ծավալող բոլոր բանկերը, բացառությամբ Մելլաթ բանկի, ինչպես նաև վարկային պրոդուկտների շուկայում՝ որոշ վարկային կազմակերպություններ: Մրցակցության ընթացքում հիմնական մեթոդներն են՝ բանկային նոր տեխնոլոգիաների կիրառում, մատուցվող ծառայությունների տեսակների ընդլայնում և որակի բարձրացում, ներգրավումային և ներդրումային մրցունակ տոկոսադրույքների կիրառում, ինչպես նաև ճկուն սակագնային քաղաքականության վարում:

Հաշվի առնելով բանկի կայուն զարգացման ռազմավարության շարունակականությունը, ապագա ծրագրավորվող գործունեությունը նպատակաուղղված է լինելու բանկի դիրքի ամրապնդմանը և ընդլայնմանը ՀՀ բանկային շուկայում, միջազգային շուկաներ դուրս գալու հնարավորության ուսումնասիրմանը, որը հիմնականում նախատեսում է ակտիվների հետագա կայուն աճ /կանխատեսվում է 25-30%-ի տարեկան աճ/, ինչպես ներգրավված ռեսուրսների /ավանդներ, միջազգային վարկային ծրագրեր/, այնպես էլ ձևավորած շահույթի և սեփական կապիտալի հաշվին:

Բանկի առաջիկա տարիների զարգացումը մեծապես պայմանավորված կլինի նոր ինստիտուցիոնալ բաժնետիրոջ հետ ծավալվող որակական նոր մակարդակի համագործակցությամբ: Կշարունակվի EBRD հետ վարկային ծրագրին զուգահեռ ակտիվորեն իրականացվող արտաքին առևտրի ակրեդիտիվային ֆինանսավորման ծրագիրը, ինչպես նաև հիփոթեքային ծրագիրը:

Բանկը նախատեսում է ընդլայնել իր համագործակցությունը նաև միջազգային ֆինանսական այլ կազմակերպությունների, հատկապես ՎՋԵԲ, ՄՖԿ, Գերմանա-հայկական հիմնադրամ (ԳՀՀ), Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի և FMO-ի, Ասիական Զարգացման Բանկի, «BLUEORCHARD MICROFINANCE FUND» LLC ներդրումային ընկերության, «SYMBIOTICS» SA, «MICRO, SMALL & MEDIUM ENTERPRISES BONDS» S.A. ֆինանսական հաստատությունների, «INCOFIN CVBA» ներդրումային ընկերության հետ՝ փոքր և միջին բիզնեսի վարկավորման հետ զուգահեռ առավել արագ կզարգանա հիփոթեքային վարկավորման համատեղ ծրագրերի իրականացումը, ինչպես նաև նոր ոլորտների վարկավորման ծրագրերը:

Առաջիկա ծրագրավորվող եկամուտների աճի հիմնական մասը նախատեսվում է ստանալ տոկոսային եկամուտներից, ավելացնելով մատուցվող ծառայություններից ձևավորվող եկամուտները: Վարկերից տոկոսային եկամուտների ավելացման ուղղությամբ կատարվում է նոր վարկային տեխնոլոգիաների ուսումնասիրում և ներդրում:

Մատուցվող ծառայություններից եկամուտների ավելացման համար իրականացվում է դրանց բազմազանում, պլաստիկ քարտերով ծառայությունների ցանկի ընդլայնում, կատարվում է անհատական պահատեղերի տրամադրում, նախատեսվում է ավելացնել բանկոմատների և սպասարկման կետերի ցանկը, զգալի արդյունքներ են ծրագրավորվում Europay և Visa վճարային համակարգի անդամությունից և միջազգային պլաստիկ քարտերի սպասարկումից, կոմունալ ծախսերի ընդունման ընդլայնումից:

Նշված խնդիրների իրականացման համար բանկը շարունակելու է տեխնիկայի պարբերական վերազինումը, ընթացակարգերի կատարելագործումը, նոր բանկային տեխնոլոգիաների ներդրումը:

Բանկը, որպեսզի առավելագույնս օգտագործի տնտեսության առկա հնարավորությունները, ապահովելով բարձր մրցունակություն ֆինանսաբանկային շուկայում, շարունակելու է մատուցել ունիվերսալ բանկային ծառայություններ:

Արդյունավետ զարգացման կարևորագույն նախապայմաններից համարելով առաջատար փորձի և նոր բանկային տեխնոլոգիաների ներդրումը, ուսումնասիրվում և ներդրվելու են ինտերնետային տեխնոլոգիաներ, հաշվի առնելով ռիսկայնությունը և ներդրման առկա հնարավորությունները:

Ընդլայնվելու են վճարահաշվարկային նոր ծառայությունների մատուցումը, պլաստիկ /ինչպես տեղական, այնպես էլ միջազգային/ քարտերով սպասարկումը, կոմունալ վճարումների ընդունումը և այլն: Բանկը նախատեսում է սկսել «Ապագայի բանկ» նախագիծը՝ առանց սպասարկող անձնակազմի՝ հաճախորդների շուրջօրյա ավտոմատ սպասարկում իրականացնող մասնաճյուղերի գործարկումը, ինչպես նաև ներդնել «Internet Banking» և «Mobile Banking» ծառայությունները, ֆինանսական լիզինգ, «CashBack» ծառայությունը, վարկային քարտի պրոդուկտը (վարկային գծի առկայությամբ), որի միջոցով քարտատերերը կկարողանան կատարել անկանխիկ գործարքներ առևտրի կենտրոններում և որպես Բանկի քարտատեր ստանալ անհատական զեղչեր այդ առևտրի կենտրոններում, որոշակի սպասարկման ոլորտների հետ թողարկել համատեղ քարտեր, որի միջոցով քարտատերերը տվյալ սպասարկման կետերից որոշակի արտոնություններից օգտվելու հնարավորություն կստանան, ընդլայնել ֆակտորինգային գործառնությունները:

Տարածքային քաղաքականության շրջանակներում կշարունակվի մասնաճյուղային ցանցի ընդլայնումը, նպատակ ունենալով ապահովել բանկի ներկայությունը հանրապետության ողջ տարածքով, ինչպես նաև գործող մասնաճյուղերի վերակառուցումն ու վերանորոգումը: Կզարգանա գործունեությունը Ռոյտերս և Բլումբերգ համակարգերով:

Հիմնական բացասական գործոնները, որոնք կարող են որոշակի ազդեցություն թողնել բանկի գործունեության վրա՝ քաղաքական-տնտեսական գործընթացներն են՝ երկրի տնտեսության հետագա զարգացման միտումները:

Նշված ռիսկերը մեղմելու համար բանկը շարունակելու է վարել հավասարակշռված ներգրավումային և ներդրումային քաղաքականություն, հնարավորինս կանխատեսելով զարգացման միտումները, դիվերսիֆիկացնելով ռիսկը, ընդլայնելով ծառայությունների ցանկը, խուսափելով վարկային և ավանդային պորտֆելների կենտրոնացումներից:

Բանկը մեծ ուշադրություն է դարձնում բանկային նոր ծրագրերի ներդրման, գործող ծրագրերի կատարելագործման խնդիրներին: Բանկում նոր տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը կրում է ծրագրավորված բնույթ: Ըստ առանձին բանկային ծառայությունների ոլորտների, ուսումնասիրվում է առաջատար համաշխարհային փորձը, կատարվում է մարքեթինգային ուսումնասիրություն դրա նկատմամբ, ապահովվում է ծառայությունների և տեխնոլոգիաների ներդրման հստակ ընթացակարգերի մշակումը՝ իրականացնելով նաև ներդրման փորձաքննություն:

Բանկում մշտական աշխատանքներ են ծավալվում նոր ծառայությունների, սպասարկման որակի բարելավման ուղղությամբ, հաշվի առնելով հաճախորդների հարցումների արդյունքները: